



## Հ. Ճ. ՍԻՐՈՒԽԻՆԻ

### Կ Ո Մ Ի Տ Ա Ս Ի Ն ՀԵՏ\*

Գ. ՓՈՒՇԵՐ ԵՎ ԽՈՒԹԵՐ ԱՌԱՋԵԼՈՒԹՅԱՆ ՄԸ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱ

Այցը, զոր Պոլսո տվինք Կոմիտասը հոն  
բերելե առաջ, մեր առջե պարզեց ամեննեն  
դժնդակ պահերեն մեկը, զոր կապրեր սուլ-  
թաններու մայրաքաղաքը Կտիրեր հոն ոե-  
ժիմ մը, որ հայ միտքն ու հոգին խամրեցու-  
ցեր էր, ու կշատեր ամեն ծիգ: Ճաճճացեր  
էր բովանդակ հայ կյանքը, և հոգեկան սփո-  
փանքի առիթ չէր կրնար տալ մարդոց:

Մամուկը կաշկանդված, գրականությունը  
ծաղկանոց նետված, հայ բեմը վաղոց հանձ-  
նըված թուրքին, միսիթարական միակ երե-  
վութը եկեղեցիներու շորջ ստեղծված եռու-  
ղեռն էր բազմաձայն երգեցողության շնոր-  
հիվ, և սակայն ան ալ անընդհատ տագնապ-  
կանցներ, տիրացուներու հարուցած խոշըն-  
դուններու երեսեն:

Եվ մինչ Պոլսո մեջ կմզվեր այսպես տիրա-  
ցուներու պայքարը բազմաձայն երգեցողու-  
թյան դեմ, Կոմիտաս թևակոխած էր արդեն  
իր առաքելության ամեննեն վճռական մեկ  
փուկը:

1907-ը, երբ ան հաղթական էջմիածին  
կդառնար Եվրոպային, ուշագրավ թվական  
մըն էր արդարև անոր կյանքին մեց: Հոգին  
թարմացած, և նոր տեսիլքներով առցուն,  
իր բույնը կդառնար հպարտ, նոր ճիգի, նոր  
տքնության լծվելու համար:

\* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվա-  
կանի № 8-ից և 9-9-է-ից.

Իր երկու համերգները 1906 դեկտեմբերին  
և 1907 հունվարին, և դասախոսությունը, զոր  
1907 հունվար 13-ին կատարեց Փարիզի մեջ,  
և ապա իր համերգներն ու դասախոսություն-  
ները, զորս տվավ նույն տարվան գարնան  
Ցյուրիխի, Ժնևի, Լոզանի, Բեռնի և Վենետի-  
կի մեջ, տեսակ մը նախադուռն եղան իր  
հիմնական առաքելության, — աշխարհին  
ցուց տալ ամեննեն շքեղ մեկ երեսը ստեղծա-  
գործ հայ հանճարին:

Ճիշտ է, որ 1899 հունիսին իր տված դա-  
սախոսությունները Բեռլինի մեջ, տեղվույն  
երաժշտանոցը ավարտած օրերուն, և երկու  
տարի հետո, 1901-ին, իր ելույթները Բեռլի-  
նի միջազգային երաժշտական համաժողովին  
մեջ, որուն մասնակցելու հրավիրվեր էր,  
ինչպես և աղկե քիչ հետո իր այցը Փարիզ,  
բացեր էին իր առաքելության ուղին:

Իրավ ալ, Փարիզ տված սույն այցելության  
առթիվ էր, որ Արշակ Չոպանյան իր «Անա-  
հիտա-ին մեջ ստորագրեր էր ամեննեն խան-  
դավառ էջերեն մեկը, էջ, որ առաջին ներբողն  
ու միենույն ատեն առաջին խրախոսանքը  
կըլլար մեծ արվեստագետին, իր ստանձնած  
վսեմ գործին մեջ,

«Այս օրերս Փարիզ եկավ և մեր մատուռին  
մեջ պատարագի ժամերգության կարևորա-  
գույն հատվածներեն մեկ քանին երգեց, —  
կգրեր Չոպանյան: — Հուզումը, զոր զգացի

իմանալով այդ վեհ ու սրտարության մեղեղինքը ու «Տէր ողորմեա»-ին վսկեմ ողբը, երդ-ված՝ պարզ, վճիտ, հզոր, «հայր ոճով մը, իր արվեստը խորապես գիտցող և իր ցեղին գեղեցկագիտական ոգվույն լիակատար ըմբռունումն ունեցող անձեռն մը, կյանքին ամենան ինորին ու ամենան քաղցր հուզումներն մին պիտի մնաւ: Իրեն հետ ունեցած մեկ քանի տեսակցությանս մեջ, վարդապետը հաճեցավ ինձի պարզել իր տեսություններն ու այն ծրագիրը, զոր կույե իրագործել, և ինձի կթվի, որ ինքը այն մարդն է, որ անհրաժեշտ է, որպեսզի հայ երաժշտությունը արմատապես վերանորոգվի իր աղավաղումնեն ու անկումն և որպեսզի ան ծանոթ դառնա և վրոպացի երաժշտագիտներուն և համաշխարհային երաժշտության մեջ սկսի գրավել այն տեղը, որուն արժանի է և զոր շունի դեռ:

Չոպանյան, ակնարկ մը նետելե հետո այն աշխատանքին վրա, զոր Կոմիտաս իրականացուցած էր մինչև այն ատեն, և հիշելե հետո Սին Սանսի, Շառլ Բորդի, Դյուլվալի և Օրբիի նման ֆրանսացի մեծ երաժշտագիտներու հիմքումը Կոմիտասի վազվան ծրագրիներուն մասին, կեզրակացներ.

«Փափագելի է, որ հայ ժողովուրդը գիտնա զնահատել այսպիսի արվեստագետ մը և տա իրեն բոլոր միջոցները, որ հարկավոր են, որպեսզի ան ամբողջապես ի զիով հանե այն հսկա գործը, որ զինքը քանենորդ դարու Շնորհալին պիտի կացուցանք»<sup>4</sup>:

Այս տողերը, 1901-ին գրված, տեսակ մը մարգարելույն էին միևնույն ատեն: Վեց տարի անցած չէր այդ օրեն ի վեր և արդեն Կոմիտաս աշխարհին բացած էր հայ հոգիին գանձերը: Եվ երբ 1907 սեպտեմբերին էշմիածին կուտանար ան ելքուղային, հոգին լեցուն էր մեծ տեսիլքներով, և նաև մեծ սարսափով ահավոր տքնությանց դաշտին համար, որ իր առջե կրացվեր:

Էշմիածինը շատ նեղ էր սակայն, որպեսզի Կոմիտաս կարենար գլուխ հանել իր մեծ առաքելությունը: Մայր Աթոռը մեծ հնարավորություններ ավելը էր իրեն, որպեսզի այդ առաքելության հիմը զներ ան: Կոմիտաս էշմիածինի մեջ էր, որ ստացեր էր ստուգիվ երաժշտական իր առաջին կրթությունը, առիթ ունեցեր էր հայ ժողովրդական երգին ծանոթանալու և դյուրություն՝ հայ հին երաժշտության ուսումնասիրությամբ պարապելու, վարժվեր էր երդ հավաքելու և դաշնակելու, ինչպես և խումբ կազմակերպելու և վարելու: Էշմիածինին կապարտեր դարձյալ կերպով մը իր երաժշտական բարձրագույն կրթությունը Բեռլինի մեջ, Մանթաշյանի օգնությամբ:

Սակայն Բեռլինեն դարձին, երբ ավելի ևս լայնցած էր հորիզոնը իր առաքելության և իր ծրագիրներուն, գործունեության ավելի լայն դաշտի մը կարիք կղզար ան: Իր շրջապայռությունները արևմտյան ոստաններու մեջ՝ Բեռլին, Փարիզ, Յուրըխ, Ժնև, Լոզան, Բեռն և այլուր, ինչպես և Կովկասի երկու մեծ հայ կեղուններուն՝ Թիֆլիսի և Բաքվի մեջ, ոչ միայն հագուրդ չէին կրցած տալ իր հոգին փոթորկող երազներուն, այլ կարծես թի ավելի ևս զրգուր էին զանոնք:

Ան վաղուց սեղմված կղզար իր հոգին արդեն էշմիածինի մեջ, ու իր շուրջը ամեն բան դժոն կթողուր զինքը:

Դեռ 1905 հունիս 25-ին էշմիածին կգրեր Մարգարիտ Բարայանին:

«Հուսով եմ, որ դուք բոլորդ էլ լավ եք. իհարկե Փարիզի պես երաժշտության ծով աշխարհում ոչ մի բոլով ձանձրույթ շեք զատ: Իսկ մենք ընկած սոսկալի խորքում, լուսության մեջ ենք սնվում. վայ մեզ»<sup>5</sup>:

Հաջորդ տարին, 1906-ին, Բեռլինեն գրած էր նույն Մարգարիտ Բարայանին, ակնարկելով հոգեկան այն հուզումներուն, զորս իրեն արվեցալ ապրիլի Բեռլինեն էշմիածին զանալին հետո.

«Այս յոթ տարի է ձրի ծառայելով թոքերս մաշելով, առողջությունս քայլայելով, համբերեցի, ոչ մի տրաունչ չհանեցի. բայց փոխանակ խրախուսի ոչ թե նախատինք, երանի՝ նախատինք լիներ, լոկ անտարբերությամբ վարձարեցին ինձ իհարկե վերարկու հանք հացել, պարտական ենք իշու պես շարքաշ լինել, կարոտ կյանք վարել, վայ քեզ, թե բերանդ բաց ես արել. Էլ «հաստափոր», էլ «ձրիակեր», էլ «պորտարույժ», էլ ինչ չգիտեմ, անուններ ժառանգես... է՛հ, էլ ինչու ձեր զլուխն եմ ցավացնում. սիրտ կտրուկոր է լինում, չեմ իմանում ինչպես հովանամ»<sup>6</sup>:

Հուսիկ եպիսկոպոս Զոհրաբյան, որ դասակից և օծակից եղած էր Կոմիտասին, և տեղյակ էր անոր հոգեկան ապրումներուն, մեր ինդրանքով գրի առած իր հուշերուն մեջ կըսի:

«Որքան որ հաջող էր նրա գործը ձեմարանում, որքան որ նա այսաեղ սիրված և հարզված և գնահատված էր ուսուցչության և աշակերտության կողմանե, նույնքան, գուցե և ավելի, հալածված էր նա վանքի մի շարք հնամու եպիսկոպուներից ու վարդապետներից, որոնք լսելով կոմիտասի բառաձայն պատարագը, զայրանալով գոշում էին. «Քանի որ Աստված մեկ է ուրեմն պատարագն

<sup>4</sup> «Անահիտ», 1901, հունիս-հուլիս:

<sup>5</sup> «Մշակույթ», Փարիզ, 1935, էջ 155.

<sup>6</sup> Անդ:

ալ միաձայն պիտի երգվի»։ Այս և նման անմիտ խոսքերով աշխատում էին այդ սնապաշտները մեղադրել Կոմիտասին և զզվեցնելով նրան կամենում էին հեռացած տեսնել նրան. այս մտքով չարախոսում, վասարանում էին նրան ամեն տեղ։ Աշխատում էին ամեն կերպ որևէ առիթ գտնել, սկսցնելու համար Կոմիտասի երգեցողովյունը, որը մեկ ինչ որ նորահնար և Հայոց Եկեղեցու ոգուն հակառակ բան էին հոչակում։ Սակայն այդ տգեսների բամբասանքը լոկ բամբասանք էր մնում և նրանց ամեն մի բողոքը անհետանք, քանի տակավին կենդանի էր Հայոց Հայրիկը, որը լուսավոր հոգի և լայն հայացքներ ուներ և որի շնորհիվ էջմիածնի նոր սերունդը ինքնին պատշաճանություն էր գտնում և ևանդոգի հնապաշտ-հնապուների ամեն տեսակ որոպայթների դիմ»<sup>7</sup>։

Մանուկ Արեւլյան, որ նույնպես մոտիկ եղած է Կոմիտասի, էջմիածնի մեջ անոր ապրած օրերուն, կգրե սակայն։

«Մի սխալ կարծիք կա տարածված, թե այստեղ (էջմիածնում) նրա հետ իրը վատ են վարվել։ Այդ ճիշտ չէ բնավ, Ընդհակառակը, նրա հետ ընդհանրապես շատ հարգանքով և սիրով էին վարվում ոչ միայն իր ընկերները, այլև ուրիշները, եվ ոչ միայն այդ, շատ բանում ներողամիտ էին և խստապահանջ չէին նրա վերաբերմամբ՝ իրու արվեստագետից»<sup>8</sup>։

Արեւլյան կթվե հետո դուրսովյունները, զորս կվայելեր Կոմիտաս էջմիածնի մեջ։ Ան կհիշե, օրինակ, թե նույնիսկ ծերունի միաբանները կհարգեին ու կսիրեին զայն, թե անոնցմե մեկը, Հովհաննես եպիսկոպոս Շիրակունին, անոր հազար ռուբլի նվիրեց Շիրյալ մը գնելու համար, թե վանքին մեջ անոր հարմար բնակարան մը հատկացուցած էին, ուր ոչ կիսանգարեր զայն, թե իր տրամադրության տակ պարտեզ մը ուներ պտղատու ծառերով, թե ազատ կերպով կընդուներ իր մշտական ջուրերը, և այլն։

Արեւլյան կփորձե հետո Կոմիտասի դժգոհության պատճառները որոնել։

«Ինչու, ուրեմն, նա ձանձրանում էր էջմիածնից և հեռացավ այնտեղից։ էջմիածինը նրան բավականություն չէր տալիս իրու ստեղծագործող երաժշտի։ Ամենից առաջ նրան հոգնեցրել էր խումբ պատրաստելը թե՛ պատրագի և թե՛ ժողովրդական երգերի համար։ Նա շատ անգամ ինձ գանգատվել է, թե իր համար մի պատիժ է դարձել այդ գործը, որովհետև խումբը կազմված էր լինում միայն Շեմարանի աշակերտներից, որոնք փոփոխվում էին և կամ մեծանում էին, ձայ-

ները փոխվում։ Ամեն տարի նույնը պետք էր գլխից սկսել։ Ապա այդ խումբը չէր բավարարում նրան, որովհետև դրան ոչ միայն մեծեր, այլև կանաչը չէին մասնակցում։ Նա փորձեց Վաղարշապատ գյուղում խառը խումբ կազմել երկու սեփից (և այդ թուլ տրվեց նրան), ապա մի տարի նույնն արակ նաև երկանում և դրա համար շաբաթը երկու օր էջմիածնից երկան էր գնում-զալիս և նույնիսկ իր խմբով Թիֆլիս էլ գնաց համերգ տալու։ Սակայն դրանցից ոչ մեկը, ինչքան մեկ համար շատ լավ էր, չէր գոհացնում Կոմիտասին։ Մեծ պակասություն էր համարում նա իր խմբի համար և այն, որ լոկ ձայնական էր, առանց որևէ նվազարանի ընկերակցության։ Մինչդեռ նրա երազն էր իր պատարագի համար երգեհոն շինել տալ, իսկ Ճեմարանի վարչությունը կարողացավ աշակերտականներ բերել տալ միայն այն ժամանակ, երբ Կոմիտաս պիտի թողներ Հայաստանը»<sup>9</sup>։

Ինչ կվերաբերի գուրգուրանքին, որով շրջապատված էր Կոմիտաս Շեմարանի մեջ, ըլլա իր պաշտոնակիցներուն, ըլլա աշակերտովյան կողմե, Արեւլյան լիապես իրավունք ունի։ Հուշերը, զորս իր մասին տպեցին շատերը Շեմարանի նախկին սաներեն (Արմենակ Շահմուրայյան, Սպիրիդոն Մելիքյան, Վահան Տեր-Առաքելյան, Արմենակ Բարսեղյան, Սիմոն Վրացյան, Արտաշես Տիրացյան, Մելքոն Քրիշյան, Աւոնդ Մելլյան, Ս. Բաղդրյան, Վահան Համբարձումյան, հիշելու համար անոնք, որոնց հուշերը տեսնելու առիթ ունեցած ենք), միահամուռ կվկայեն բացառուիկ այն պաշտամունքի մասին, զոր սնուցած են Շեմարանի սաները գեպի մեծ վարպետության, որ եթե մասամբ հետևանք էր ակնածանքին, զոր անոնք կտածեին անոր տաղանդին հանդեպ, մեծ շափով կրիսեր այն անիման սերեն, զոր կներշնչեր ինքը վարպետը։

Եվ սակայն շատերը նույն այս սաներեն, ինչքան Տեր-Առաքելյան, Վրացյան, Բարսեղյան, Քրիշյան և այլն, իրենց հուշերուն մեջ շեն մոռնար մատնանշելու նաև անբարյացակամ այն վերաբերմունքը, զոր Կոմիտասի նկատմամբ ցույց տված են ոմանք միաբանության անդամներեն, բնականաբար անոնք առավելապես, որոնց ավանդապաշտովյունը թուլ չէր տար, որպեսզի հանդուրժեն շունչը, զոր Կոմիտաս մատուցեր էր վանքեն ներսւ

Զափազանց բնորոշ են, օրինակ, դոկտ. Արմենակ Բարսեղյանի սա քանի մը տողերը անհանդուրժողության այն մթնոլորտին մա-

<sup>7</sup> «Նախասարդ», Բուքրեց, 1925 ապրիլ, էջ 268—269։

<sup>8</sup> «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 71։

սին, որում մեջ կլլկվեր վարպետին դյուրագաց հոգին.

«Եղմիածնի հին միաբանները (այդ միջոցին մեծամասնությունը հիներ էին) սկսան տրտնջալ... պատարազը երկար կաևս: Վարդապետը շափ տալու ատեն կրնե շարժումներ՝ որոնք բեմի վրա միայն բույլարելի են: Քառածայն պատարազեն բողոքականուրյուն կրուրե:

Այս տրտունչները օր մըն ալ դարձեր էին բողոք և ներկայացվեր լուսահոգի Խրիմյան Հայրիկին: Աստված մեկ է և անոր մատուցված պատարազն ալ միաձայն կրնա ըլլալ, — ըստ ու էին հայրապետին ներկայացող պատամավորները:

Ազատախոն, բանաստեղծ ու արվեստասեր հայրապետը իրեն հատուկ նուրբ հեղոնաբոլ ճամբեր էր այդ պատգամավորները...

Նախանձն ու տգիտությունը, սակայն, չէին առեր իրենց դասը: Պետք էր հագեցնել կիրքը: Եվ աճա փսխուք մը վանքին մեջ... Ազի օր Կոմիտասը պատարազիշ է եղեր և հաղորդության սկիհին գիճին ամբողջովին չէ խմեր, այլ անոր մեկ մասը քափեր է:

Կիշեմ, թե ինչպես կատղեր էր Կոմիտաս վարդապետ, երբ լսեր էր այս վայրենության մասին:

— Անզոր հակառակորդի զենք է, հայր սուսը, արհամարին, ըսի:

Մեզմացավ: Լսեց և սկսավ մտածել: Չուշացավ նաև լրջության խառնված զվարճախոսությունը.

— Հսածդ նիշտ է, որդի՛դ սուրբ (հաճախ այս ասությունը կդորժածեր իրեն նայեց սուրբին), բայց ես այլևս պատարագ չեմ կրնար ընել:

Ու լրավ: Եվ իրիմյան Հայրիկ հասկցավ զինքը<sup>10</sup>:

Վահան Տեր-Առաքելյան, իր լավագույն սաներեն մին, ըսելե հետո, որ «Ճեմարանի ամբողջ աշակերտությունը սրտանց սիրում էր պարզ ու կենսուրախ Կոմիտասին և լիովին վայելում էր նրա շերմ սերն ու ընկերական վերաբերմունքը, գիշերօթիկ սաների հատուկ խանդապառությամբ համախմբվելով նրա շուրջը և լսելով». Նրա մտերմական հատակներն ու սրախսությունները», — կգրե իր հուշերուն մեջ, թե վանքին ներս հոգեւորականներ ալ կային, որոնք այնքան հաշտ աշքով չէին նայեր «սեր» երգող վանականին, որի քառածայն պատարազից «լութերականության հոտ էր փշում»<sup>11</sup>:

<sup>10</sup> Գրկան. Ա. Թարենըլյան, «Հուշեր Կոմիտաս վարդապետի կյանքին», «Հայրենիք», 1935, նոյեմբեր 22:

<sup>11</sup> «Կոմիտաս» ժողովածու, Երևան, 1930, էջ 96:

Մենք շենք ուզեր հավատալ, որ անձնական թշնամութենե կրիսեր անբարյացակամ այս մեթոդորար: Բյուրեղի նման հոգին, որ Կոմիտասին էր, չէր կրնար թշնամի ունենալ: Այո՛, թշնամի մը ուներ ան. բայց այդ՝ ժամանակին էր, ուր ան կապրեր: Հոգիները գեռ հասունցած չէին ըմբռնելու համար նոր շունչը, զոր Կոմիտաս կրերեր: Ավանդապաշտությունը, որ կհամառեր կառչիլ մարդոց ըմբռնումներուն, վեղար կրեին անոնք թե ոչ, թումբ կշարեր բոլոր այն ճիգերուն առջն, որոնք պիտի գային հեղաշրջել հայ միտքը, և հայ կյանքն ալ անոր հետ: Մեր պատմության հին ու նոր բոլոր սահմանական կոմիտաս կրիս բայց հացին կազմությունը, ու թույլ չէր տար, որ իրենց պայքարը քրթմնչյուններն անդին անցնի:

Զգայուն հոգին, որ Կոմիտասին էր, յէր կրնար շաղվիլ նույնիսկ ամենեն փոքր քրթմնչյուններն անոնք, որ ճանշած են զինքը, զիտեն, թե շատ ամուր էր հոգիով, արհամարձելու համար ամեն չկամություն և խօրձանք, և տեր էր կամքի մեծ ուժի մը իր շղիկեր զսպելու համար: Իր տառապանքը առավելապես անկե էր, որ իր շրջապատը ալես գոհացում չէր կրնար տալ իրեն: Երաժբարտապետի պաշտոնը, զոր ուներ Մայր Աթոռի մեջ, շատ փոքր էր, ասպարեզ դառնալու համար իր հոգին շարշարող ծրագիրներուն: Նույնիսկ երգաշախումբը, զոր իր տառամադրության տակ ուներ հոն, չէր կրնար զինքը գոհ թողուց: Դժգոհ էր մանավանդ երգիներու ձայներնեն:

Ակնարկելով այն պատրաստություններուն, որոնց ստիպված էր զիմել թաղման պատարազը երգել տալու համար իր խումբին, երիմյան կաթողիկոսի վախճանումեն հետո, Կոմիտաս 1909-ին պիտի գրեր Մարգարիտ Բաբայանին:

«Վեհափառի անակնկալ մահն ինձ այնպիսի աշխատության մեջ ձգեց, որ դեռ նոր է խելքս զլիիս գալիս: Երևակայիր մի բանակ կուրած ձայներ, ապականված մտքեր, փշացած անհատներ, որոնք այս կամ այն կերպ Ճեմարանի աշակերտության են արժանացել...

...Սկսեցի պատրաստություն տեսնել, ահա թե ինչպես: Թեպետև պատրագն ունիմ ամբողջապես գրված, բայց խառն խմբի համար է. այժմ ծեմարանում փոքր աշակերտներ շկան, որովհետև Ա. և Բ դասարանները փակ են. ուրեմն պետք է գործ սկսել մեծ աշակերտների ծեռովով միայն: Պետք էր նոր պատարագ գորել արական խմբի համար: Շատ լավ. ձայն չկա, եղածները խոպտ, ագուզային խարդախ հնչյունով ձայներ, այդ էլ մեծ մասը փշացած տեղորներ, մի քիչ եցաւոտ, թուլ, խավար ու մեռած հնչյուններով. ահա՝ քեզ խումբ: Ուզած շուրած պետք է պատրաստեալ<sup>12</sup>:

Ժամանակակիցներու հուշերեն գիտենք, թե Կոմիտաս պահ մը փորձած է տեղափոխվիլ Կովկասի մեծ կեղրուններեն մեկը: Թիֆլիսն ու Թաքրին, այն օրերու իրենց հավակնություններով, թերևս կարենային ընդարձակել աշխատանքի իր մարզը: Անոնք թերացան իրենց պարտականությանը մեջ. անտարբեր մնացին:

(Այդպես են հաճախ մեծ քաղաքները: Թովմաս Հարտման, ոռու մեծ երաժշտագետը, տարիներ հետո, այն է 1919-ին, Թիֆլիս արցելած ատեն կըսեր. «Մայրաքաղաքների հետանացությունը վաղուց հայտնի է: Թիֆլիսում ավելի լավ չեր: Երբ ուզեցի գտնել նրա (Կոմիտասի) երկերը, ոչ մի երաժշտական խանություն հնարավոր չեղավ դրանք գտնել: Ճշմարիտ է, նրա հեղինակությունները տպվել են արտասահմանում. բայց եթե պահանջ լիներ, նրանց կարելի էր վերահրատարակել Թիֆլիսում: Պահանջ չկար»<sup>13</sup>:

Այդ ձախողութենեն հետո, Փարիզը ամենն հարմար վայր կմնար իր ծրագիրներուն համար: Անգամ մը այցելեր էր արդեն հոն և կազդուրիվեր հոգեպես: Ելրոպական մեծ ստանի մը մեջ, որպիսին Փարիզն էր, ան պիտի կրնար միշտ նորոգվիլ ու միշտ ստեղծել: Դժվար էր անշուշտ գործել հայ հողեն հեռու, հայ ժողովուրդին հետ անմիջական շփոմի զրկված: Բայց ինչ որ քաղեր էր ան արդեն հայ ժողովուրդի հոգեկան ստեղծագործություններեն, բավական ատաղձ էին իրեն երկար տարիներու համար. Փարիզ ավելի ևս ոյուրություն պիտի տար իր մշակումներուն:

Կոմիտասը Փարիզ թերեւու գաղափարով պահ մը խանդավառվեցավ նաև Արշակ Չոպանյան: Չոպանյան, որ Կոմիտասի ամեննեն շերմ և սրտացավ համակիրներեն մեկն էր եղեր առաջին օրեն և որ հետագային ալ զմայլելի զորավիր մը պիտի դառնար անոր,

նույնիսկ աշխատեցավ իրականացնելու այդ ծրագիրը:

Ահա թե ինչ կորե ան.

«Ստանալով իրմեն նամակ մը Թեովինեն, ուր եկած էր քանի մը շարթվան համար, գրեցի իրեն գալ Փարիզ և գեթ ատեն մը մնալ ու գործել այստեղ: Իրը եկամուտ ուրիշ բան շուներ, բայց եթե էշմիածնա միաբանի իր փոքրիկ ամսականը, որ հեռու էր Փարիզի պես տեղ մը իր պետքերուն բալվել. Հուզու ունի սակայն, որ Փարիզի հայ զաղութքը պիտի ուզեր այսպիսի վարպետ ու հմայիլ երաժիշտ մը իր եկեղեցվույն իրը դպրապետ պահել և անոր ապրուստը վայելչորեն ապահովել: Այդպես կմտածեի, և դեպքերը ցույց տվին, որ կսիալեի: Հետևեցալ թելարությանս և եկավ Փարիզ. շատ բան ըրավի հայ արվեստին, հայ անունի վարկին համար, բայց Փարիզի հայերը ըսրին ինչ որ պետք էր զինքը իրենց մեջ պահելու համար, ու տարի մը ետքը սրտառեկ ու զառնացած ելավ դարդավ էշմիածին»<sup>14</sup>:

Տեղը չե հոս պատմել բոլոր մանրամասնությունները այս դժիմմ անտարբերության: Չենք կրնար սակայն հատված մը ևս շարտագրել Չոպանյաննեն, Կոմիտասը Փարիզ պահելու համար իր կատարած փորձերուն մասին:

«Իդեալ լուծումը՝ անշուշտ՝ իր Փարիզ մնալն էր: ...Փարիզի հայ եկեղեցվու իրը դպրապետ՝ իր կյանքն ապահոված, ան հոյակապ հայկական երգչախումբ մը պիտի կազմեր, և այլն, և այլն: ...Այս էր, որ կիփափագեի ես, ու կկարծեի, թե այդ փափագս ոյուրավ իրականանալի բան մըն էր, քանի որ ամսական քանի մը հարյուր ֆրանկի վրա էր խնդիրը: Թելարեցի զայդ այն ատենիվան Փարիզի հայ եկեղեցվու հոգաբարձության ատենապես հանգուցյալ Միհրան Չովակիմյանին, որ խորապես կսիրեր և լրջորեն կդաւագանական կոմիտաս վարդապետը... Հովակիմյան բոլորովին համաձայն, այդ առաջարկը դրավ հոգաբարձության սեղանին վրա, և անդեց ինչքան կրցավ, բայց առանց հաջողության. իր ընկերները հայտարար էին, թե իրենք ալ կգնահատեին Կոմիտաս վարդապետը, բայց կկարծեին, թե եկեղեցվույն միշոցները թույլ չէին տար դպրապետ ու խումբ պահելու... Հոգաբարձությունը եկեղեցվու երիցատան մեջ սենյակ մը հատկացուցած էր Կոմիտաս վարդապետին՝ որպես զանոնկի ծախս շունենա, աղիկա բավական հհամարեին իրենց համակրությունը հայտնելու համար: Գացի եկեղեցվու վարչու-

<sup>12</sup> «Մշակութ», էջ 161—162.

<sup>13</sup> «Անահիտ», 1935, թիվ 1—2, էջ 75.

<sup>14</sup> Արշակ Չոպանյան, «Անահիտ», 1931, թիվ 1—2, էջ 119.

թյան հախագահ Հանգուցյալ Ա. էգնայանը տեսնելու և ջանացի զինք համողել անկարելի եղավ. գովեստով խոսեցավ վարդապետին վրա, բայց, ըսավ, «տարեկան ինչ հասույթ որ ունի եկեղեցին՝ պատրաստ ենք անոր ավելցուք ամբողջությամբ բանկան դնել՝ եկեղեցվույն ապագան ապահովելու համար»։ Մեր այժմյան պայմաններուն մեջ, դպրապետ ու խոսմբ՝ մեղի համար Առությ են, որուն միջոցները չունինք...»<sup>15</sup>։

Կերպի, թե Փարիզի մեջ այլապես ալ վարդ շքաղեց Կոմիտաս, ու դառն պահեր հոն ալ ապրեցավ։ Քաղվածքը, զոր Մարգարիտ Բարայան կընե 1906 դեկտեմբեր 8-ին Կոմիտասի կողմեր Փարիզին իսկ իրեն գրված նամակե մը, կակնարկե նման դառնության մը, թեև օրիորդ Բարայան չէ հիշեր, թե ո՞վ էր վիրավորեր այն ատեն անոր դյուրազգաց սիրալ։

«Զեր նամակն ինձ շատ մխիթարեց. բայց և այնպես, մարդիկ հավատում են ավելի վատ լուրերին, քան լավերին, և անվանարկվածը երկար ջանք պետք է ի գործ դնե, որ կարողանա անպիտանների միտքն էլ մաքրել։ Բայց կասեր ինչ փուլթ, թո՞ղ շարն իր շարության մեջ խեղպվի։ Իրավէ, ես էլ եմ կրկնում ժողովրդի հետ այն վեճ միտքը, թե «գեղ մարդու օր արեց սև հողի տակով արեք», միենույն ժամանակ աջ և ձախ նայում, տեսնում, որ մարդիկ առավել վատահոգի են, քան բարեհոգի։ Զկան, եթե կան, շեն երևում այնպիսինները, որոնք շարերի վրա արհամարհանք տածեն. ընդհակառակը, մարդկային թույլ և շատ տկար կողմերից մեկն էլ այն է, որ լսածին հավատալ են ուզում, առանց ճշմարտության կշիռ ունենալու. այո՞, շատ հեշտ է դատելը, բայց դատվել ո՞վ է ցանկանում. մարդասպանը նույնիսկ դատից խուսափում է, ո՞ւր մնաց անմեղն ու անպարտը։ Ես էլ, թեև ներս բոլորովին մաքուր և զինջ է, ինչպես հստակ ու պայծառ վտակ, բայց շար մարդիկ քար են ձգում ու պղտորում։ Անշուշտ, կանցնի պղտորումը, էլի վճիռ կլինի, բայց և այնպես պղտորելուց հետո գիթ մի այնպիսի շար բան արած լինեի, որ

անպատվարեր լիներ իմ կոշման, սիրու չէր ցավի, կասեի «Հնձիր ունածդ». բայց չարի բերանը չոփ է լցրած»<sup>16</sup>։

Եվ, ավա՞զ, Կոմիտաս այս հոգեկան տագնապները կապրեր ճիշտ այն օրերուն, երբ եկեր էր Եվրոպային փառք քաղելու հայ ժողովուրդին համար։

Մյուս կողմեր, Աբեղյան կըսեր իր հուշերուն մեջ.

«Չեմ հիշում ում և ինչ թելադրանքով, նա 1906 թվին գնաց Գերմանիա և ապա Փարիզ այն մեծ հույսով, թե այնտեղ կկարողանա հրատարակել իր եղանակները։ Բայց միայն մի տասնյակ երգ հրատարակելուց հետո՝ «Հայ քնար» անվան տակ՝ վերադարձավ էջմիածին, և երբ ես նրան հարցրի, թե ինչու այդքան սակավաթիվ երգեր նա հրատարակեց, Կոմիտասն սկսեց կծու խոսքեր ուղղել և արեւլան, և արեմտյան հայ հարուստների համար։

Եվ այնուհետև Կոմիտասը, որ առաջ էլ սիրում էր մենանալ, սկսում է մոայլել և սրբանեղվել առանց, սակայն, պակասեցնելու իր անդուզ աշխատանքները. նա ձանձրանում էր էջմիածնից»<sup>17</sup>։

Ինչպես և շանձրանար հեր արվեստագետը, երբ զարձակալ կուպար իր հուզումները բանտել իր ներսը։

Եվարած էր ան։ Թիֆլիս անտարբեր էր եղեր, Փարիզ շատ պաղ, իսկ Պոլիսը չէր կըրնար զեռ մաքեն անցնել Կոմիտաս։ Ու շարունակից տառապիլ զեռ ատեն մը, իր երազները ներսը խեղդելով։

Բայց ահա, շատ շանցած, բացառիկ դեպքեր պիտի ցնցեին սուլթաններու մայրաքաղքի։

Անոնք նոր էջ մը պիտի թվագրեին Կոմիտասի կյանքին մեջ ևս, զործունեության նոր դաշտ մը բանալով անոր առջեն, բայց և ճակատագրական ըլլալով, ավա՞զ, իրեն համար։

(Շարունակելի)

<sup>16</sup> «Մշակույթ», էջ 156—157։

<sup>17</sup> «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 70—71։